

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ռ Շ ՈՒ Մ 52/1

4 դեկտեմբերի 2012թ.

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով <Գոշ-Գագ> ՍՊԸ ներկայացուցչի 17.11.2012թ-ի դիմում-բողոքը (մուտք «ԿԱ ՊԵԿ 19.11.2012թ. թիվ 13092-12) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ վերոգրյալ դիմում-բողոքը ենթակա չէ քննարկման հետևյալ պատճառաբանությամբ:

<Գոշ-Գագ> ՍՊԸ դիմում-բողոքը, ըստ էության, վերաբերվում է «ԿԱ ՊԵԿ պաշտոնատար անձանց կողմից 16.10.2012թ-ին իրականացված գործողություններին:

<Գոշ-Գագ> ՍՊԸ (այսուհետ նաև Ընկերություն) դիմում-բողոքում մասնավորապես նշված է.

16.10.2012թ-ին Արաբկիրի ՀՏ ՕՎԿ աշխատակիցները 12:00-ի սահմաններում, Ընկերության Աճառյան 46 հասցեի մոտ, առանց համապատասխան փաստաթուղթ ցույց տալու և ներկայանալու, ինչպես նաև առանց համապատասխան աճը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու, սպասելով մինչ Ընկերության աշխատակիցները հեռանան այդտեղից, ագրեսիվ ձևով մտնում են տարածք ու տարածքը հսկող պահակի նկատմամբ սկսում իրականացնել ստիպողական գործողություններ: Նպատակ հետապնդելով վերջինից տեղեկություն կորզելու թվով 4 անձից պահակ Աշոտ Գալստյանին համոզելով նստեցնում են իրենց մեքենան ու տեղափոխում Արաբկիրի ՀՏ Կոմիտասի պողոտայի 35 հասցե: Այնտեղ վերջիններս նույնպես առանց ներկայանալու, միայն հայտնելով, որ գտնվում են հարկային տեսչությունում սկսում են պահակի հարցաքննությունը՝ պատճառաբանելով, որ դա անհրաժեշտ է հարկային գործերի համար: Եվ նման համոզիչ գործընթացը նրանք իրականացնում են վերջինիս ցույց տալով համակարգչում եղախ տեղեկությունները, որոնք իհարկե պահակի կողմից ընդունվում են, որ այդպես էլ կա: Այնուհետև, ՀՏ աշխատակիցները թելադրում են Աշոտ Գալստյանին գրելու այն մասին, ինչ վերջիններիս է ցանկալի միաժամանակ զգուշացնելով, որ իրենք ունեն բավականին իշխանություն, որպեսզի իրենց ուզածը կատարեն ու պահակը չի կարող իրենց թելադրածից բացի ուրիշ բան գրել: Եվ այդ թուղթը ստորագրելուց հետո նոր նրանք Աշոտ Գալստյանին բաց կթողնեն: Իսկ այս ամբողջ գործընթացը վերջիններս իրականացնում էին պահանկին համոզելու միջոցով ու պատճառաբանում, թե հարկային ակտերի հետ կապված տնօրենին են ման գալիս:

Դիմում-բողոքով ընկերության ներկայացուցիչը խնդրել է իրականացնել համապատասխան վարչարարություն, մեղավորներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու համար:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> «Ը օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն. <Վարչական բողոքը կարող է բերվել վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում>:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> «Ը օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. <Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս բողոքը թողնվում է առանց քննարկման, եթե դա ներկայացված է սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և ժամկետը բաց թողնելը, սույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հարգելի չի ճանաչվել>:

Քննարկվող դեպքում վարչական մարմնի կողմից գործողությունը կատարվել է 16.10.2012թ-ին, իսկ դրա դեմ բողոքը բերվել է 17.11.2012թ-ին, որը «ԿԱ ՊԵԿ մուտք է եղել 19.11.2012թ-ին:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնատար անձանց կողմից 16.10.2012թ-ին իրականացված գործողությունների դեմ բողոքն Ընկերության կողմից բերվել է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով սահմանված ժամկետի խախտմամբ: Հետևապես, բողոքը պետք է թողնվի առանց քննարկման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

<Գոշ-Գազ> ՍՊԸ ներկայացուցչի 17.11.2012թ-ի դիմում-բողոքը թողնել առանց քննարկման:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ